

«ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԲԸ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

- Առևտրային վարկավորման տրամադրման վերաբերյալ դիմում՝ ներառյալ վարկավորման նպատակը, ծախսման ուղղությունները և գումարները (անհրաժեշտության դեպքում՝ Դիմումում զետեղված տեղեկատվության վերաբերյալ հնարավոր է պահանջվեն հիմնավորող փաստաթղթեր (լրացվում է Բանկում):
- Տնտեսվարող սուբյեկտի Ընդհանուր ժողովի կամ միակ մասնակցի որոշման արձանագրությունից քաղվածք՝ Վարկը ստանալու և/կամ գրավադրվող գույքի վերաբերյալ (գույքը տվյալ տնտեսվարող սուբյեկտին սեփականության իրավունքով պատկանելու դեպքում):
- Իրավաբանական անձի Կանոնադրության պատճենը, անհատ ձեռնարկատիրոջ և ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը, սոցիալական քարտ/հանրային ծառայության համարանիշ/հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանք:
- ՀՀ/ԱՀ պետական ռեգիստրի համապատասխան մարմնի կողմից՝ Հաճախորդի պետական գրանցումը հավաստող միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (կամ պետական ռեգիստրի վկայականի ներդիր և ՀՎՀՀ):
- Հիմնադիրների, տնօրենի անձնագրերի պատճեններ:
- ՀՀ/ԱՀ պետական ռեգիստրից և/կամ դեպոզիտարիայից (բաժնետիրական ընկերության դեպքում) տեղեկանքներ/քաղվածքներ բաժնետերերի/մասնակիցների կազմի, տնօրենի և կանոնադրության վերջին փոփոխությունների վերաբերյալ, եթե չի իրականացվում էլեկտրոնային հարցում:
- Տեղեկանք՝ հարկային պարտավորությունների վերաբերյալ:
- Գործունեության ծավալման վայրի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթուղթ կամ տեղազննման արձանագրություն՝ գործունեության ծավալման վայրի վերաբերյալ ֆիզիկական անձի դեպքում՝ նաև տեղեկանք բնակության վայրից:
- Արտոնագրեր/լիցենզիաներ՝ արտոնագրված/լիցենզավորված գործունեության դեպքում:
- Որպես գրավ առաջարկվող միջոցների (անշարժ գույք, հիմնական միջոցներ, շարժական գույք, ապրանքանյութական արժեքներ և այլն) սեփականատեր հանդիսանալու հիմքեր (առք ու վաճառքի պայմանագիր և այլն) և սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր (սեփականության վկայականներ, իսկ ավտոմեքենաների և սարքավորումների դեպքում՝ տեխնիկական անձնագրերի բնօրինակներ, որոնք պատճենահանելուց (թվայնացնելուց) հետո վերադարձվում են հաճախորդին):
- Առաջարկվող գրավի գնահատման/վերագնահատման ակտ/հաշվետվություն կամ արժեքի որոշման հիմք:
- Երաշխավորի կողմից ստորագրված՝ երաշխավորությունը ստանձնելու հավաստագիր:
- Անհատ ձեռնարկատեր և ֆիզիկական անձ վարկառուների դեպքում (գյուղատնտեսական ֆինանսավորման նպատակով)՝ բնակության վայրից տեղեկանք ընտանիքի կազմի մասին:
- Գույքահարկի գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք՝ ոչ բնակելի անշարժ գույքի գրավադրման դեպքում:

- Անշարժ/շարժական գույքի նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ անշարժ/շարժական գույքի գրավով ապահովված վարկերի տրամադրման դեպքերում:
- Ֆիզիկական անձ գրավատուների անձը հաստատող փաստաթղթերի պատճեններ, ամուսնության վկայականի պատճեն կամ ամուսնության մեջ գտնվելու կամ չգտնվելու վերաբերյալ համապատասխան տեղեկանք ՔԿԱԳ-ից, իսկ վերջինիս ներկայացման անհնարինության դեպքում փաթեթում ապահովել գույքը ձեռք բերելու պահին ամուսնության մեջ գտնվելու մասին նոտարական գրասենյակում տրված հայտարարություն Ֆիզիկական անձ երաշխավորների դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթերի պատճեններ, սոցիալական քարտ/հանրային ծառայության համարանիշ/հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանք:

Այլ փաստաթղթեր/տեղեկանքներ, որոնք անհրաժեշտ են ֆինանսական վերլուծության, որոշումների կայացման, վարկավորման հաստատման, կնքվող պայմանագրերի վավերականության ստուգման և վավերացման համար: